



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



**ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՔՐԵՍԵՆԹԱ ՀՈՎԻՏԻ
ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ**

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Շաբաթ, 18 Դեկտեմբերը տօնն է Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետին:

Այս առթիւ, Կիրակի, 19 Դեկտեմբերին, Քրեսենթա Հովիտի Հայաստանեաց Առաքելական Եկեղեցւոյ համայնքին համար Եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցուի Ազգ. Առաջնորդարանին մէջ:

Ս. Պատարագը պիտի մատուցէ եւ օրուան յատուկ իր պատգամը պիտի փոխանցէ Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան:

Ս. Խորանին պիտի սպասարկէ Եկեղեցւոյ հոգեւոր մատակարար Արժ. Տ. Արտակ Զինյ. Տեմիրճեան:

**PRELATE TO CELEBRATE DIVINE LITURGY AT THE CRESCENTA
VALLEY PARISH**

Saturday, December 18th, 2010, is the Feast of St. James of Nisibis.

On this occasion, on Sunday, December 19th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy, ordain deacons, and deliver the sermon at the Crescenta Valley parish.

Parish Pastor Rev. Fr. Ardak Demirjian will assist at the altar.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀՅՈՐ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ
ԸՆԹՐԻՔԸ**

Ազգային Առաջնորդարանի տարիներու բարի աւանդութեանց շարքին է Ս. Ծննդեան ու Ամանորի Առաջնորդ Սրբազան Հոգի ընթրիքը:

Ամեն տարի, 6 Յունուարի երեկոյեան, ժողովականութեան ներկայացուցիչներ, բարերարներ ու բարեկամներ մէկ յարկի տակ կը

համախմբուին Առաջնորդ Սրբազան Հոր, հոգեւորականներուն եւ Ազգ. Իշխանութեան անդամներու շուրջ, աղօթքով ու բարեմաղթութեանց փոխանակումով սկսելու նոր տարին ու յիշատակելու Քրիստոսի հրաշալի Ս. Ճնունդը:

Այս տարի եւս, նախաձեռնութեամբ Թեմիս Կրօնական Ժողովին ու Ազգային Վարչութեան, Առաջնորդ Սրբազան Հոր Ս. Ճննդեան ընթրիքը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, 6 Յունուար 2011-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Սոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի «Բաղրամեան» սրահին մէջ:

Ձեռնարկը կազմակերպուած է Ազգային Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին կողմէ:

Յաւելեալ տեղեկութեանց համար հեռաձայնել Ազգային Առաջնորդարան:

PRELATE'S NEW YEAR AND CHRISTMAS DINNER

Each year on the evening of January 6th, Prelacy clergy, sponsors, friends, and representatives of sister organizations gather for the Prelate's traditional New Year and Christmas Dinner to collectively celebrate the New Year and the Glorious Birth and Theophany of our Lord Jesus Christ.

This annual dinner organized by the Prelacy Ladies Auxiliary, will take place on Thursday, January 6th, 2011, at "Bagramian" Hall of Holy Cross Cathedral in Montebello, starting at 7:00 p.m.

Please contact the Prelacy for more information.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՈՒ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ՝ ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԵՅՈՅԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՀԵՏ



Թեմիս բարեխաւս
Առաջնորդ Բարձր. Տ.
Մուշեղ Արք. Մարտիրոսեան
եւ Ազգային Վարչութեան
անդամներ Հինգշաբթի, 16
Դեկտեմբերին այցելեցին
Սան Ֆրանսիսքօ եւ
աշխատանքային
հանդիպում մը ունեցան Ս.
Գրիգոր Լուսաւորիչ
եկեղեցւոյ
հոգաբարձութեան ու
ազգային երեսփոխաններու
հետ: Առաջնորդ

Սրբազանին կ'ընկերանային Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պողոսեան եւ անդամներէն, Տեարք Թորոս Զէչէճեան, Կարէն Բենեասեանս, Պիլ Սաաթճեան եւ Սագօ Շիրիքեան:

Հանդիպումը առիթ եղաւ քննարկելու ծխական համայնքի անմիջական հարցերն ու հոգաբարձութեան աշխատանքի ընթացքը: Խորհրդակցութեան նիւթ եղաւ նաեւ եկեղեցւոյ օժման 45ամեակը պատշաճ շուքով տօնելու ծրագիրն ու յարակից հարցեր:

Հոգաբարձութիւնը ընդհանուր գիծերու մէջ ծանօթութիւններ փոխանցեց իր ծրագիրներուն, աշխատանքի ընթացքին եւ անկէ բխող ընթացիկ մարտահրաւերներու մասին: Խորհրդակցութեան նիւթ դարձան լուծման միջոցներն ու Ազգային Վարչութեան կողմէ աջակցութեան միջոցները:

PRELATE AND EXECUTIVE COUNCIL MEMBERS MEET WITH ST. GREGORY CHURCH BOARD OF TRUSTEES



On Thursday, December 16th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Executive Council members arrived in San Francisco where they met with the Board of Trustees and Delegates of St. Gregory Church. Executive Council Chair Mrs. Rima Boghossian and members Mr. Toros Kejejian, Mr. Kahren Beniasians, Mr. Bill Sahatdjian, and Mr. Sako

Shirikian participated in the meeting.

The purpose of the meeting was to discuss and evaluate the current endeavors and concerns of the parish community, as well as plans to celebrate the 45th anniversary of the church.

Members of the Board of Trustees reported on their current and future activities and challenges they face, in response to which the Prelate and Executive Council members offered their suggestions and support.

ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆՂԵԱՆ ՏՕՆԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ ՅԻՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՅԱՐԿԻՆ ՏԱԿ



Ամանորի եւ Ս. Ծննդեան տօնի նախօրեակին, եւ համաձայն տարիներու բարի ակաւակութեան, Երեքշաբթի, 14 Դեկտեմբերի կէսօրին, Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ կոկիկ հիւրասիրութիւն մը, որ Թեմիս բարեխնամ

Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի շուրջ համախմբեց հոգեւորականաց դասու, Ազգ. Վարչութեան եւ յանձնախումբերու անդամներ ու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Ազգ. Առաջնորդարանի անձնակազմի անդամները:

Ճաշի հիւրասիրութիւնը կազմակերպուած էր Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին կողմէ: Առաջնորդ Սրբազանին եւ հոգեւորականաց դասուն առաջնորդութեամբ աղօթքէ ետք, ներկաները բոլորեցին հաճելի պահ մը, բարեմաղթութիւններ փոխանակելով եւ սրտի խօսքեր արտասանելով: Նաեւ իրականացաւ յանպատրաստից գեղարուեստական յայտագիր մը՝ երգերով ու ասմունքով:

Հանդիսավարն էր Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեան: Խօսք առին Կրօնական Ժողովի ատենապետ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան, Տիկնանց Օժանդակ Մարմինի ատենապետուհի Տիկին Մարիամ Կարապետեան, յանձնախումբերու անդամներ Տեառք Հրայր Ճերմակեան, Կարօ Էսկիճեան, Յովսէփ Պոյաճեան եւ Առաջնորդարանի դիւանապետ Տիար Սարգիս Մահերեճեան:

Իր խօսքին մէջ, Առաջնորդ Սրբազանը գնահատանքով արտայայտուեցաւ Տիկնանց Օժանդակ Մարմինի մէն մի անդամի ջանադիր աշխատանքին մասին, վեր առնելով այն իրողութիւնը, որ այս մարմինը տարուան ընթացքին տարբեր հանգրուաններու միշտ պատրաստ է յաջող կերպով կազմակերպելու տօնական հանդիսութիւններ ու ճաշկերոյթներ, որոնք շինիչը, օգտակարն ու հաճելին կը միախառնեն իրարու եւ իսկական ընտանեկան միջավայր կը ստեղծեն Ազգ. Առաջնորդարանի յարկին ու հովանիին տակ: Ան այս առիթով գնահատանք արձանագրեց նաեւ Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ տարուող աշխատանքներուն մասին եւ մաղթեց, որ Ամանորի ու Ս. Ծննդեան ոգին մեր բոլոր աշխատանքներուն մէջ տիրապետող ըլլայ ոչ միայն տօնական օրերուն, այլ ամբողջ տարուան ընթացքին ու ամենուրեք:

Առաջնորդ Սրբազանը անդրադարձաւ Յիսուս Մանուկի Ս. Ծննդեան խորհուրդին, նշելով, որ անիկա հոմանիշ է սիրոյ, խաղաղութեան, բարի յարաբերութիւններու եւ անյիշաչարութեան. այս ու նմանօրինակ յատկանիշներու որդեգրումով, մեր աշխատանքներն ու գործակիցներու հետ յարաբերութիւնները կը զարգանան հեզասահ կերպով, կարելի կ'ըլլայ խուսափիլ ու շրջանցել այնպիսի դժուարութիւններ, որոնք հետեւանք են այլապէս ոչ նկատառելի մանրութիւններու: Վերջապէս, Առաջնորդ Սրբազանը բոլոր ներկաներուն ու Ազգ. Առաջնորդարանի գործակիցներուն մաղթեց բարեբեր տարի մը, զերծ՝ ամէն տեսակի տագնապէ, եւ հաճութեամբ առլցուն տօնական օրեր:

Հանդիպումը վերջ գտաւ Առաջնորդ Սրբազանին պահպանիչով ու «Կիլիկիա»ի խմբերգումով:

NEW YEAR AND CHRISTMAS LUNCHEON HELD AT THE PRELACY



Each year on the threshold of the New Year and Christmas, Clergy, Executive Council members, members of Prelacy committees, and staff join H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, for a Christmas luncheon hosted by the Prelacy Ladies Auxiliary at the "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall.

This year's luncheon took place on Tuesday, December 14th, 2010.

The luncheon began with a prayer led by the Prelate with the participation of clergy. During the lunch, guests exchanged well wishes to one another and participated in the singing of Christmas and traditional Armenian songs.

Master of Ceremonies Very Rev. Fr. Barthev Gulumian welcomed the guests and conveyed his thoughts on this occasion. Remarks were also delivered by Very Rev. Fr. Muron Aznikian, Executive Council Chair Mrs. Rima Boghossian, Ladies Auxiliary Chair Mrs. Mariam Karapetian, Outreach Committee Chair Mr. Herair Jermakian and member Mr. Garo Esguijian, Building Committee member Mr. Hovsep Boyajian, and Prelacy Chancellor Mr. Sarkis Mahserejian.

In his remarks, the Prelate first commended the members of the Ladies Auxiliary for hosting this traditional luncheon, and for all their efforts throughout the year in organizing various events. He also commended all those who contribute to the realization of the Prelacy's endeavors and wished that the

spirit of the New Year and Christmas remain with us and inspire us not only during this season but throughout the year.

Reflecting on the timeless message of love, peace, and harmony which the Glorious Birth and Theophany of our Lord Jesus Christ represents, the Prelate wished that these virtues guide our endeavors and collaboration with one another so that together we can overcome any obstacles that arise and fulfill our goals and our mission. In conclusion, the Prelate extended his felicitations to all for a blessed and prosperous New Year.

The luncheon came to a close with the benediction by the Prelate, and the singing of the Cilician anthem.
